**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Վահրամ Սողոմոնյան

masnakcayindproc@gmail.com

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Օտար լեզու

## Թեմա՝ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ; ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Հետազոտող՝ ԱՆՈՒՇ ԴԱԼԼԱՔՅԱՆ ԼԵՎՈՆԻ

Մասնագիտություն՝ անգլերենի ուսուցչուհի (10-12-րդ դաս.

**ՀՀ ԿԳՄՍՆ ՆՈՐ ՀԱՃՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ**

հասցե՝ ք. Նոր Հաճն, Տոռոզյան փ.13, հեռ.՝ 0224 430 46

Էլ. հասցե՝ norhajen2@schools.am

Web կայքի հասցե՝ nor hajen.schoolsite.am

**Ղեկավար՝ Արաքս Մանուչարյան**

ՆՈՐ ՀԱՃՆ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ .....5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....8
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....13
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17
ՀԱՎԵԼԱԾ 1.....18
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....19

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը կրթության որակի բարելավման հիմք է հանդիսանում: Ժամանակակից կրթական համակարգի նպատակն է նոր մեթոդների և ծրագրերի օգնությամբ բարենպաստ պայմաններ ստեղծել անձի զարգացման համար՝ հաշվի առնելով նրա հետաքրքրությունները և ընդունակությունները:

Օտար լեզուն՝ որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: ընդլայնում է սովորողների աշխարհայացքը, նպաստում է հաղորդակցական և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը: Համաձայն օտար լեզուների առարկայական չափորոշիչների՝ 10-րդ դասարանում աշակերտները պետք է կարողանան՝ բանավոր կապակցված խոսք կառուցել՝ նկարագրելով անձերին, իրեր, երևույթներ՝ ցույց տալով դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները, համեմատություններ կատարել, արտահայտել իրենց տեսակետը, մեկնաբանություններ կատարել: Այյս և նմանատիպ այլ հմտություններ զարգացնելու նպատակով օտար լեզվի դասավանդման գործընթացում ևս օգտագործվում են ակտիվ և պասիվ ուսուցման մեթոդներ:

Ակտիվ ուսուցման մեթոդները -

1,նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը:

2,Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ:

3,մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը:

4, ՈՒԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա:

ՈՒԱՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը

հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

●Ուսումնական դրական խթանի ձևավորում,

●Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում.

●Կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում.

●Ինքնագործունեության խթանում,

●Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն

●Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,

●Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,

●Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,

●Սովորողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,

●Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Հարցադրումների մեթոդը ակտիվ ուսուցման մեթոդներից մեկն է, որը նպաստում է ամբողջ դասարանի ընդգրկվածությանը և աշակերտների ակտիվության բարձրացմանը:

10-րդ դասարանի աշակերտները տարեսկզբում խուսափում են խոսել՝ վախենալով անծանոթ շրջապատում սխալներ թույլ տալուց: Հարցերի կիրառումը դասավանդման գործընթացում՝ հատկապես 10-րդ դասարաններում ամենաարդյունավետ գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը ստեղծում է անկաշկանդ մթնոլորտ, որը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը:

Այդ նկատառումներից ելնելով ուսուցիչը ունի շատ կարևոր խնդիր՝ խթանել օտար լեզվի հանդեպ աշակերտների հետաքրքրությունը, նպատակաուղղված մանկավարժական աշխատանք կատարել նրանց հետ՝ ընդգծելու համար նրանց լեզվաբանական ընդունակությունները , նպաստել այնպիսի իրավիճակի ստեղծմանը դասի ժամանակ, որում աշակերտները հետաքրքրություն և ստեղծագործություն կցուցաբերեն օտար լեզվի դասաժամերին: Հենց այս նկատառումով եմ առաջնորդվել տվյալ հետազոտական աշխատանքի

շրջանակներում, որի նպատակն է մշակել որոշ հնարներ աշակերտների մոտ օտար լեզու առարկայի նկատմամբ հետաքրքրություն խթանելու ուղղությամբ: Հետազոտության խնդիրներն են.

Ուսումնասիրել հոգեբանական, մանկավարժական, մեթոդական գրականություն հետազոտության խնդրի շուրջ; Ուսումնասիրել ավագ դպրոցականների լեզվական կարողունակությունների ձևավորման առանձնահատկությունները; Ուսումնասիրել և առանձնացնել այն գործոնները, որոնք նպաստում են աշակերտների մոտ օտար լեզվի հանդեպ հետաքրքրության ձևավորմանը; Մշակել մեթոդական հանձնարարականներ դպրոցականների հետաքրքրության և ներգրավվածության խթանման ուղղությամբ: Առաջադրված խնդիրների լուծման ընթացքում կիրառվել են այնպիսի մանկավարժական մեթոդներ և գործիքներ, ինչպիսիք են աշակերտների հետ գործնական աշխատանքի իրականացումը, աշակերտների թեստավորումը և անկետավորումը, ինչպես նաև վերլուծական մոտեցումներ, որոնք թույլ են տվել ընդհանրացնել ստացված տեղեկատվությունը և համապատասխան եզրահանգումներ կատարել ուսումնասիրվող խնդրի շուրջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթության մի շարք փորձագետներ, այդ թվում բազմաթիվ փորձառու և հմուտ ուսուցիչներ, կարծում են, որ բանավոր հարցադրումներն ուսուցչի ամենաազդեցիկ գործիքներից են: Իսկ ինչո՞ւ:

Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը եւ ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է եւ ոչ ուսուցիչը [5, 823]: Հարցեր տալու եւ հարցերին պատասխանելու կարողունակությունն ուսումնառության մեջ առանցքային եւ կարեւոր տեղ է գրավում:

Մ.Գոուզը իր աշխատության մեջ խոսելով հարցերի մասին նշում է, որ դեռևս Սոկրատեսի օրոք հարցադրումների լայնորեն կիրառվել են դասավանդման գործընթացում: Սոկրատեսը պնդում էր, որ հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել եւ ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաեւ բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի եւ արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը [Gose M. When Socratic dialogue is flagging: questions and strategies for engaging students]:

Ջ. Պետին խոսելով հարցադրումների մեթոդի մասին նշել է՝ պարզվել է, որ վերջին 15 տարիների ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչները մեծամասամբ տվել են սխալ հարցեր՝ կենտրոնանալով ոչ թե ուսումնառությունն առաջ մղող, այլ սովորողի տիրապետած որոշակի տեղեկույթը վերհանող հարցադրումների վրա Petty,G.(2009) Teaching today CH14 “Questioning”:

Ջ. Քոլնը նշում է,որ առարկայի նկատմամբ աշակերտների հետաքրքրության ձևավորումը, կայացումը և շարունակականությունը, հմուտ մանկավարժական գործողությունների միջոցով անընդհատ զարգանալով և ամրապնդվելով, դառնում է ուսման հանդեպ դրական վերաբերմունքի հիմքը, ստեղծում է ուժեղ

մոտիվացիոն դաշտ, խոսում  է հարցադրումների տեխնիկայի մասին J.Coll. Teach Learn.

Ս. Խաչատրյանը իր «Ուսուցման արդյունավետ հնարներ» աշխատության մեջ ոչ միայն
հարցադրումների մեթոդը համարում է արդյունավետ հնարներ այլև ներկայացնում է  հարցադրումների ռազմավարությունը, որի օգնությամբ հնարավոր է բարձրացնել ածակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Աշխատանքի  նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ եւ դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:

Ինչպես տեսնում ենք,  տարբեր հեղինակներ հարցադրումների մեթոդը մեկնաբանում են տարբեր դիրքորոշումներից և տեսակետներից: Սակայն բոլորն էլ միահամուռ ճիշտ ձևով կազմված հարցերը, նպաստում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը  Եթե հարցերը ճիշտ են մշակված և աշակերտները կարողանում են գտնել հարցերի պատասխանները,  այդ գործընթացը կրում է բավականին ակտիվ բնույթ և ուղեկցվում է մշտական ստեղծագործական աշխատանքով աշակերտի կողմից: Պետք է նշել, որ եթե աշակերտը ինքնուրույն է գտնում հարցի պատասխանը, ավելի լավ և հեշտ է սոցվորում և մտապահում նյութը: Սա ոչ միայն հանգեցնում է ուսումնական գործընթացի արդյունավետությանը, այլև խթանում է երեխայի հոգեկան գործընթացների՝ հիշողության, մտածողության, երևակայության, ստեղծագործականության զարգացմանը:: Անկաշկանդ աշխատանքային մթնոլորտ ստեղծելու համար պետք է նշել, որ չկա սխալ պատասխան: Այս դեպքում ոչ այնքան համարձակ աշակերտների մասնակցությունը դասապրոցեսին ևս կապահովվի: Ուսումնական բարենպաստ մթնոլորտը

աշակերտին տալիս է ինքնքվստահություն, քանի որ  յուրաքանչյուր անձին բնորոշ է ցանկությունը լինել ավելի խելացի և ավելի առաջադեմ ուսման մեջ: Հենց այս ձգտման շնորհիվ է, որ աշակերտները կարողանում են վեր բարձրանալ են ամենից, ինչ արդն ունեն և ձգտել նոր բարձունքների, միաժամանակ բավարարելով սեփական ինքնագնահատականի բարձրացման պահանջը:

## Հետազոտության մեթոդները

## Հարցադրումների մեթոդ

Կրթության մի շարք փորձագետներ, այդ թվում բազմաթիվ փորձառու և հմուտ ուսուցիչներ, կարծում են, որ բանավոր հարցադրումներն ուսուցչի ամենաազդեցիկ գործիքներից են: Իսկ ինչո՞ւ:

Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը եւ ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը [5, 823]: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողունակությունն ուսումնառության մեջ առանցքային և կարեւոր տեղ է գրավում:

Պարզվել է, որ վերջին 15 տարիների ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչները մեծամասամբ տվել են սխալ հարցեր՝ կենտրոնանալով ոչ թե ուսումնառությունն առաջ մղող, այլ սովորողի տիրապետած որոշակի տեղեկույթը վերհանող հարցադրումների վրա:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ եւ դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:

Ուսուցման արդյունավետության եւ սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ:

Անգլերենի դասերին հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարեւոր եւ բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել եւ ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաեւ բարձրացնել աշակերտների ներգրավվածության

աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի եւ արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական
մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը [4, 47]:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների մի քանի ռազմավարություններ, որոնք կարող են նպաստել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածության մեծացմանը եւ ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

1.Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն

Սա այն մոտեցումն է, երբ ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Ամենայն հավանականությամբ, սա ամենատարածված մեթոդներից մեկն է, որի շրջանակում տրվող հարցերը հիմնականում նպատակ ունեն պարզելու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել, թե որքանով են աշակերտներն ընկալել ուսուցանվող նյութը:

Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Ավելին, հաստատվեց նաեւ Գալլի այն տեսակետը, որ որքան ավելի շատ հարցադրումներ են հնչում, այնքան ավելի պակաս աշակերտներ են մասնակցում դասին:

Ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը:

Օրինակ – 10-րդ դասարանում “Back to Britain again” դասի քննարկման ժամանակ հնչեցվեց հարց.

-ի՞նչ գիտեք Մեծ Բրիտանիայի մասին

- 2 աշակերտ պատասխանեցին «այն գտնվում է Եվրոպայում, Լոնդոնը Բրիտանիայի մայրաքաղաքն է>>, մեկը պատասխանեց «Էլիզաբեթ II-ը Մեծ Բրիտանիայի թագուհին է>>, իսկ ոմանք ընդհանարապես չարձագանքեցին:

Ներգրավվածությունն ավելացնելու նպատակով փոխվեց հարցի ձևակերպումը

Ո՞վ կարող եք ցույց տալ Մեծ Բրիտանիան քարտեզի վրա:

Ո՞ր օվկիանոսներ են ողողում Բրիտանիայի ափերը:

Ո՞վ կարող է ասել երկրի պաշտոնական անունը:
Ո՞ր երկրներն են մտնում Միացյալ թագավորության մեջ:
Ինչու՞ է երկիրը կոչվում միապետություն:
Ինչպի՞սի միապետություն է Միացյալ թագավորությունը:
Ինչու՞ է կոչվում սահմանադրական միապետություն:

Այս անգամ ավելի շատ թվով աշակերտներ մասնակցեցին քննարկմանը:

Այնուհետեւ հարցերի շրջանակն ավելի ընդլայնվեց, աշակերտներին հանձնարարվեց խոսել Միացյալ Թագավորության կլիմայի, քաղաքական կառույցի մասին, անվանել Շոտլանդիայի, Ուելսի, Իռլանդիայի և Անգլիայի մայրաքաղաքները:

Սխալ եւ ճիշտ պատասխան հնչեցրած աշակերտները, աշխատանքի կատարման արդյունքում համագործակցելով միմյանց հետ, կարողացան ներկայացնել Մեծ Բրիտանիայի աշխարհագրական դիրքը, կլիման, քաղաքական կառույցը:

Նույն ռազմավարության շրջանակում պարզ է, որ հարցերի ճիշտ ընտրությունը եւ դրանց ճիշտ ձեւակերպումն էականորեն կարող են փոխել վերջնական արդյունքը: Եթե հարցադրման սկզբում դասին ներգրավված էին ընդամենը 2-3
աշակերտ, ապա հարցերի ձեւափոխման արդյունքում դասին ակտիվորեն մասնակցում էր գրեթե ողջ դասարանը:

Հարցադրման մեթոդի արդյունավետության մեջ համոզվելու համար համեմատենք իմ անցկացրած դասի օրինակը երկու տասներորդ դասարաններում, որտեղ միևնույն ուսումնական նյութն եմ փորձել հաղորդել: Երկու դասարանում էլ փորձել եմ սովորեցնել են Մեծ Բրիտանիայի աշխարհագրությունը և կլիման “Back to Britain again” թեմայի շրջանակում:

Առաջին դասարանում կիրառվել է պատմելու մեթոդը:

Ուսուցիչ: Երեխաներ, դուք անցյալ տարի ուսումնասիրել եք Մեծ Բրիտանիայի աշխարհագրական դիրքը, նրա կլիման, մշակույթը: Եկեք վերհիշենք ձեր անցածը: Մեծ Բրիտանիան գտնվում է երկու կղզիների վրա, որոնցից մեծը Բրիտանիան է, իսկ փոքրը՝ Հյուսիսային Իռլանդիան է: Բրիտանիա կղզու վրա են գտնվում Անգլիան, Ուելսը և Շոտլանդիան: Հյուսիսային Իռլանդիան

գտնվում է Իռլանդիա կղզու վրա: Այս կղզու վրա մենք կարող ենք տեսնել 2 պետություն՝ Հյուսիսային Իռլանդիա և Իռլանդիա հանրապետությունը:

Միացյալ թագավորությունը ողողվում է 2 օվկիանոսներով՝ Ատլանտյան և խաղաղ և Հյուսիսային ծովով: Ինչպես դուք աշխարհագրություն գիտեք, եթե երկիրը գտնվում է օվկիանոսի կամ ծովի ափին, նրա կլիման մեղմ է: Այդ իսկ պատճառով Միացյալ թագավորության կլիման մեղմ է՝ ամռանը շատ շոգ չէ, հաճախ անձրև է տեղում, ձմռանը ցուրտ չէ: Ձյունը հազվադեպ է տեղում և արագ հալչում է:

Երկրորդ դասարանում միևնույն ուսումնական նյութը հաղորդելու համար հարցադրումների մեթոդն է կիրառում:

Ուսուցիչ: Ո՞ր կղզիների վրա է գտնվում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորությունը:

1-ին աշակերտ: Բրիտանիա:

Ուսուցիչ: Ինչպե՞ս էր կոչվում երկիրը՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորություն:

2-րդ աշակերտ: Մեծ Բրիտանիայի

Ուսուցիչ: Ճիշտ է: Բայց ես հարցրի ո՞ր կղզիների վրա է գտնվում: Մեծ Բրիտանիայի և...

3-րդ աշակերտ: Հյուսիսային Իռլանդիայի

Ուսուցիչ: Հյուսիսային Իռլանդիան որ կղզու հյուսիսային մասն է:

4-րդ աշակերտ: Իռլանդիայի

ՈՒսուցիչ: Ապրեք: Իսկ հիմա ասենք, թե որ կղզիների վրա գտնվում Միացյալ թագավորությունը և որ կղզին է ամենամեծը:

1-ին աշակերտ: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորությունը գտնվում է Մեծ Բրիտանիա և Իռլանդիա կղզու հյուսիսային մասում: Ամենամեծ կղզին Մեծ Բրիտանիա կղզին է:

Ուսուցիչ: Ճիշտ է,: Իսկ հիմա տեսնենք,թե քանի երկիր է մտնում Միացյալ թագավորության կազմի մեջ:

2-րդ աշակերտ: Հյուսիսային Իռլանդիան, Անգլիան: Ուսուցիչ: ճիշտ է:: Էլ որ երկրներն են գտնվում Մեծ Բրիտանիա կղզու վրա (կարող եք օգտվել քարտեզից):

3-րդ աշակերտ: Շոտլանդիան, ՈՒելսը:

ՈՒսուցիչ: Ճիշտ է, ապրեք: Նորից կրկնենք (քարտեզի վրա ցույց տալով): Քանի՞ մասից է բաղկացած Միացյալ թագավորությունը:
4-րդ աշակերտ: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորությունը բաղկացած է 4 մասից՝ Անգլիա, Շոտլանդիա, ՈՒելսի և Հյուսիսային Իռլանդիա:
Ուսուցիչ: Ճիշտ է, ապրեք: Ինչու՞ են Մեծ Բրիտանիան և Իռլանդիան կոչվում կղզի՝ հիշենք աշխարհագրությունից:
1-ին աշակերտ: Շրջապատված են օվկիանոսով և ծովերով:
Ուսուցիչ: Ճիշտ է: Ո՞ր օվկիանոսով
2-րդ աշակերտ: Ատլանտյան
Ուսուցիչ: Ճիշտ է: Էլ
3-րդ աշակերտ: Հյուսիսային
Ուսուցիչ: Հյուսիսային ծովով և ...
4-րդ աշակերտ: Իռլանդական ծովով
Ուսուցիչ: Ճիշտ: Միացյալ թագավորության ափերը ողողում են Ատլանտյան օվկիանոսը, Իռլանդական և Հյուսիսային ծովը: Երեխանե՛ր որտե՞ղ է կլիման ավելի մեղմ՝ Հայաստանու՞մ, թե՞ Վրաստանում:
1-ին աշակերտ: Վրաստանում:
Ուսուցիչ: Ճիշտ է, ինչու՞: (Վրաստանն ի՞նչ ունի, որ մենք չունենք: Շատ հայեր ամեն տարի գնում են Վրաստան...)
2-րդ աշակերտ: Ծով:
Ուսուցիչ: Ճիշտ է ապրեք: Այսինքն Վրաստանը ծովափնյա երկիր է, որի պատճառով նրա կլիման մեղմ է: Եկեք վերհիշենք՝ ո՞ր օվկիանոսն ու ծովերն են ողողում Միացյալ Թագավորության ափերը:
3-րդ աշակերտ: Ատլանտյան օվկիանոսը:
4-րդ աշակերտ: Հյուսիսային ծովը և Իռլանդական ծովը:
Ուսուցիչ: Կեցցեք: Ի՞նչ եք կարծում՝ Անգլիայում կլիման ինչպիսի՞ն կլինի:
1-ին աշակերտ: Մեղմ
Ուսուցիչ: Ձմեռները ցուրտ կլինեն թե՞ տաք:
2-րդ աշակերտ: Տաք:
Ուսուցիչ: Ճիշտ է: Անգլիայում ձմռանը տաք է, ձյուն քիչ է գալիս, հաճախ անձրևում է: Իսկ ամռանը Անգլիայում շոգ կլինի թե՞ զով:

3-րդ աշակերտ: Շոգ

Ուսուցիչ: Այն երկրներում, որտեղ կլիման մեղմ է, ամռանը հիմնականում...

4-րդ աշակերտ:շատ շոգ չի լինում:

Ուսուցիչ: Լավ: Ուրեմն՝Մեծ Բրիտանիան և Հյուսիսային Իռլանդիան ողողվում են Ատլանտյան օվկիանոսով, Իռլանդական և Հյուսիսային ծովերով: Ուստի՝ երկրի կլիման մեղմ է՝ ձմռանը ցուրտ չէ, ամռանը շոգ չէ:

Հարցադրումների մոտեցման մեջ էական առավելություն կա, և դա այն է, որ այսպիսի դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքները «փոխանցելի» են: Պատկերացրե՛ք, որ այս երկու դասարաններում տրվի հետևյալ հարցը.

-Ինչպիսի՞ն է կլիման Հնդկաստանում:

Այն դասարանը, որտեղ դասն ընթացել է պատմելու մեթոդով, հավանաբար կասի.

«Մենք Հնդկաստանի մասին չենք անցել»:

Այն դասարանում, որտեղ սովորեցրել են հասկանալ, թե ինչպիսին է կլիման ծովափնյա երկրներում, հավանաբար ճիշտ պատասխաններ կլինեն: նրանք կկարողանան իրենց ըմբռնումը փոխանցել և կիրառել անծանոթ խնդրի պարագայում: Կարևոր է սովորեցնել հասկանալու, այլ ոչ թե պարզապես իմանալու համար: Հարցադրումների մեթոդը սովորեցնում է աշակերտներին ինքնուրույն մտածել:

Այս երկու մոտեցումների տարբերություններում արդյոք որևէ այլ բան նկատո՞ւմ եք: Հարցադրումների մոտեցումն աշակերտների համար ավելի հետաքրքիր է. նրանք պասսիվ լսելու փոխարեն ակտիվ ներգրավված են, բացի դրանից հարցադրումների ոճը միտված է խթանելու աշակերտների հետաքրքությունը. Ինչպիսի՞ն է կլիման ծովափնյա երկրներում: Դեռ ավելին, հարցադրումների ոճով դասերի ընթացքում աշակերտներին ստիպում են մտածել. ներկայացվում է թեմայի տրամաբանությունը և համեմատություններ են կատարում:

Հարցադրումների ոճով դասի ընթացքում շեշտը դրվում է հասկանալու, ոչ թե պարզապես իմանալու վրա: Պատմելու վրա հիմնված դասի ընթացքում աշակերտներին պարզապես ասվում էր այն, ինչը նրանք պետք է իմանան. նրանց չէին դրդում հասկանալ, և քիչ հավանական է, որ նրանք մտապահեն ասվածը: Սա ևս կառուցողականություն է, ինչպես տեսանք

առաջին գլխում:

Հարցադրումների արդյունքում աշակերտներն իրենց ենթադրություններն ու նախկինում ստացած գիտելիքը հարցականի տակ են դնում և շտկում:

Այս օրինակում հարցադրումներ կիրառող ուսուցիչն աշակերտների ընկալման վերաբերյալ վայրկենական հետադարձ կապ էր ստանում, իսկ դասն առաջ էր ընթանում:

Երբ հարցադրումները կիրառում ենք որպես դասավանդման մեթոդ, ի հայտ է գալիս ևս մեկ էական առավելություն: Երբ խոսում էինք մոտիվացիայի մասին, նշվեց, որ աշակերտները պետք է իմանան, որ ուսումնառության մեջ հաջողություն են գրանցում: Ոչինչ այնքան չի մոտիվացնում, որքան աշակերտի բավարարվածության զգացումը, երբ նա հարցին ճիշտ է պատասխանում և անմիջապես արժանանում ուսուցչի ջերմ գովասանքին:

Հետևաբար, ամփոփելով ներկայացնում ենք հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝

- Ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում՝ խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը
- Ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա
- ստեղծում է փոխանցելի գիտելիք
- տալիս է ակնթարթային հետադարձ կապ (թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին) սովորելու գործընթացի վերաբերյալ
- դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին
- աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է
- աշակերտներին թույլ է տալիս գործնականում կիրառել ձեր հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը
- վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը)

- մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում
- անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը
- կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար
- թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը
- խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը:

Թերություններն այն են, որ հարցադրումների մոտեցումը.

- Կարող է ժամանակատար լինել
- դժվարեցնում է խմբում բոլոր աշակերտների ներգրավվածությունը
- հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար:

## Հարցադրումների տեխնիկան

Ինչպե՞ս պիտի կիրառենք հարցադրումների մեթոդը: Հարցադրումների լավ տեխնիկան պետք է քաջալերի դասարանի բոլոր աշակերտներին մտածել: Խուսափելով «Ես աշխատում եմ ձեր սխալները բռնել» մթնոլորտից՝ այն պետք է հնարավորություն տա աշակերտներին ստանալ դրական հետադարձ կապ՝ ցույց տալով ուսումնառության մեջ նրանց հաջողությունները:

Հարց տալուց հետո պետք է սպասել- աշակերտներից շատերն այդ ժամանակ ջանում են գտնել պատասխանը: Երբ նրանք արդեն բավականաչափ մտածել են, խնդրե՛ք մեկին պատասխանել: Եթե կոնկրետ աշակերտի եք ընտրում պատասխանելու համար նախքան հարց տալը, դասարանում մյուսները մտավոր առումով օտարվում են, եթե ոչ քնում: Օգտակար բանաձև կարող է լինել «Հա՛րց տվեք. դադա՛ր առեք. գործի՛ անցեք» (Pose-Pause-Pounce!) արտահայտությունը: Որքան ավելի երկար դադար տաք, այնքան ավելի երկար կմտածեն աշակերտները և ավելի ծավալուն պատասխաններ կտան:

Անհրաժեշտ է խրախուսել պատասխանները՝ սկզբում տալով պարզ հարցեր, հատկապես, 10-րդ դասարաններում, որտեղ նոր խմբի հետ գործ ունեք: Առանց չափն անցնելու՝ ցույց տվե՛ք, որ երախտապարտ եք ստացած պատասխանների համար և միշտ գովեստի արժանացրե՛ք ճիշտ պատասխանները: Եթե պատասխանում են ցածր ձայնով, կրկնե՛ք այն դասարանի համար:

Ինչպե՞ս պետք է վարվել սխալ պատասխանների դեպքում: Ուսուցիչը չպետք է ծաղրի սխալ պատասխանները, փոխարենը պետք է փորձել տրամաբանական մտածողության միջոցով հանգեցնել ճիշտ պատասխանին: Սխալ պատասխանի դեպքում նա պարզապես ասում է, թե ինչու է այն սխալ (առանց պատասխանը հայտնելու), հետո մեկ այլ հարց է տալիս՝ աշակերտին ճիշտ ուղու վրա դնելով: Նա օգտագործում է նաև սխալ պատասխանները թյուրըմբռնումներն ուղղելու նպատակով:

Հարցադրումների հմտություններն այս մակարդակին հասցնելու համար ձեզ փորձառնություն է հարկավոր: Բայց ժամանակի ընթացքում դուք կհասնեք դրան և հաճույք կստանաք այդ գործընթացից:

**Հարցերի բաշխումը**




Ստորև ներկայացնում եմ այն մեթոդական հանձնարարականները, որոնք օգնել են ինձ հարցադրումների մեթոդով աշխատանքի ժամանակ: Այս հանձնարարականների օգտագործումը մեծապես բարձրացնում է աշակերտների ներգրավվածության աստիճանը:

Դասարանին հարցեր ուղղելիս ուսուցիչը պետք է փորձի **հարցերը բաշխել հնարավորինս հավասարաչափ՝**

-Հետևի նստարանին նստածներից ո՞վ կպատասխանի այս հարցին:

-Արմե՛ն, դու ի՞նչ կասես:

-Իսկ ի՞նչ կասեք, եթե այս հարցին պատասխանի նա, ով դեռ

ոչ մի հարցի չի պատասխանել:

Դասարանի այս սխեմայում պատկերված է այն, ինչը երբեմն անվանում են **«ուսուցչի տեսադաշտ»**: Դրա ներսում գտնվող աշակերտները, ամենայն հավանականությամբ, դասի ընթացքում ներգրավված են լինում, ուստի ավելի հավանական է, որ հենց նրանք պատասխանեն հարցերին:

Այն աշակերտները, որոնք չեն ցանկանում մասնակցել դասին, նստում են ուսուցչի տեսադաշտից դուրս: Ձեր դպրոցական տարիներից երևի կհիշեք վերջին տեղերի համար մղվող պայքարը ոչ այնքան սիրելի դասերին:

Չափազանց հեշտ է անտեսել դասարանի վերջում նստած լուռ աշակերտներին: Փորձե՛ք ներգրավել նրանց: Սակավախոս աշակերտներից կարելի է պատասխան ստանալ **ժեստերի և աչքերի կոնտակտի** շնորհիվ: Օրինակ՝ ենթադրենք, թե ձեզանից ձախ գտնվող երկու աշակերտները դեռ ոչ մի հարցի չեն պատասխանել: Եթե հարց տալուց հետո մոտենաք նրանց և նայեք նրանցից մեկին, հետո՝ մյուսին, կարողանալու դեպքում նրանցից մեկը պատասխան կտա:

**Մի՛ վախեցեք աշակերտներին շատ մտածելու ժամանակ տալուց**. դա ժամանակի վատնում չէ: Սպասելիս ժպտացե՛ք, եթե ձեզ անհանգստացնում է նրանց վրա ճնշում գործադրելը:

Ուսուցիչ: Ինչ է նշանակում սերունդների տարաձայնություն: Ինչպես կվերաբերվեիք դուք ձեր երեխաների հետ, ձեր ծնողների փոխարեն:

Ձեր կարծիքով ուսուցիչն ի՞նչ պատասխան ստացավ: Կարծում եմ՝ կռահեցիք. նա ոչ մի պատասխան էլ չստացավ: **Ձեր հարցերը պետք է լինեն հակիրճ ու պարզ և ոչ միաժամանակ:**

**Խուսափե՛ք այնպիսի անորոշ հարցերից, որոնք կարող են ունենալ մի շարք ճիշտ պատասխաններ**: Ես լսել եմ, թե ինչպես են բազմաթիվ սկսնակ ուսուցիչներ տվել «Կռահե՛ք, թե ինչ եմ ես մտածում» տիպի հարցեր: Ահա մեկ օրինակ. մարմնակրթության ուսուցիչը հանձնարարում է աշակերտներից մեկին խմբի առաջ ցույց տալ վարժություն՝ ամփոփելու նախորդ շաբաթվա սովորածը: Ուսուցիչը նկատում է, որ աշակերտի ձեռքը սխալ դիրքում է և անորոշ կերպով աշակերտի կողմը

ցույց տալով՝ հարցնում. «Այստեղ ի՞նչ եք տեսնում»: Հարցն այնքան անորոշ էր, որ ոչ մի աշակերտ վստահ չլինելով, չի պատասխանում: Ավելի լավ կլիներ հարցը ձևակերպել հետևյալ կերպ. «Ո՞վ կասի՝ այս դիրքի մեջ ի՞նչ սխալ կա»: «Ի՞նչ եք այստեղ տեսնում»-ը ոչ թե բնական հարց է, այլ հրավեր՝ կռահելու, թե ինչի մասին է մտածում ուսուցիչը: Նա կզայրանար, եթե աշակերտներից մեկը (ճշմարտացիորոն) պատասխաներ. «Սյուզիին՝ կանաչ սպորտային հագուստով»:

Եթե հարցը հանգեցնում է ձեր և աշակերտներից մեկի միջև խոսակցության, **աչքերի կոնտակտի և ժեստերի միջոցով ներգրավե՛ք դասարանի մյուս աշակերտներին**: Դասարանին **տվե՛ք ձեր սեփական մեկնաբանությունները**, և եթե աշակերտի դիտարկումները շատ ցածր ձայնով են արվում, **կրկնե՛ք, որպեսզի բոլորը կարողանան լսել:**

Եթե աշակերտները դժկամորեն են պատասխանում, **սկզբում համոզվե՛ք, որ ձեր հարցերը բավականաչափ պարզ են**, որ բավականաչափ սպասել եք և որ **աշակերտներին գովեստի խոսք կամ շնորհակալություն եք հայտնում պատասխանների համար**: Եթե դրանից հետո էլ խնդիրներ ունենաք, կիրառե՛ք ստորև ներկայացվող զույգերով աշխատանքը:

## Զույգերով աշխատանքի կիրառումը

Եթե ձեր աշակերտները շատ անտարբեր են հարց ու պատասխանների ընթացքում, կամ եթե ձեր հարցերը դժվար են, բայց հետաքրքիր, կարելի է կիրառել նաև զույգերով աշխատանքի հետևյալ ռազմավարությունը: Հարց տվե՛ք և այն գրե՛ք գրատախտակին, հետո հանձնարարե՛ք զույգերով քննարկել՝ տալով նրանց բառացիորեն մեկ կամ երկու րոպե ժամանակ: Անհրաժեշտության դեպքում քննարկման ժամանակ հետևե՛ք, թե արդյոք աշակերտները ուշադիր են առաջադրանքի հանդեպ: Հետո լսե՛ք նրանց՝ գովեստի արժանացնելով խելամիտ պատասխանները: Զույգերով աշխատանքը աշակերտներին մտածելու ժամանակ է տալիս, ինչպես նաև նրանց թույլ է տալիս ստուգել իրենց պատասխանները զուգընկերոջ

հետ: Սա ավելացնում է նրանց վստահությունը՝ ըստ այդմ էլ ավելացնելով ձեր հարցերին արձագանքելու նրանց պատրաստակամությունը:

Փորձառու ուսուցիչները սովորաբար իրենց խոսքը 1 րոպեում համեմում են 1-4 հարցով: Տրամաբանական մտածողություն պահանջող դժվար նյութ բացատրելիս նրանց ներկայացումն, ըստ էության, հաճախ 100%-անոց հարցերի շղթա է դառնում:

## Բաց և փակ հարցեր

Հարցադրումների մեթոդով աշխատելիս ո՞ր հարցերն են ավելի արդյունավետ՝ բա՞ց թե՞ փակ:

Փակ հարցերն ունեն միայն մեկ գոհացուցիչ և սովորաբար շատ կարճ պատասխան: Օրինակ՝

-Պետք է լինի «Անկեղծորե՞ն Ձեր», թե՞ «Հարգանքով Ձեր»:

-Վտանգ կա՞, որ բույսը կարող է չորանալ:

Բաց հարցերը պահանջում են ավելի հանգամանալից և հաճախ մեկից ավել ճիշտ պատասխան: Օրինակ՝

-Ինչպիսի՞ն է ձեր երազած դպրոցը:

-Ի՞նչ կփոխեիք մեր դպրոցում, որպեսզի ավելի հաճույքով հաճախեիք դպրոց:

Բաց հարցերը ստիպում են աշակերտներին մտածել, իսկ ուսուցչին շատ ավելի տեղեկություններ են հաղորդում աշակերտների սովորածի վերաբերյալ: Ի հեճուկս սրան՝ փակ հարցերը, ինչպես օրինակ՝ «այո/ոչ» հարցերը, սովորաբար քիչ մտորումների տեղիք են տալիս: Պատասխանը կարելի է կռահել 50% հաջողությամբ, այդ պատճառով էլ դրանց «հայտորոշիչ ուժը» ցածր է, այսինքն՝ ուսուցիչը չի կարող համոզված լինել, որ ճիշտ պատասխանը վկայում է հաջողված ուսումնառություն մասին:

## Հարցադրումների մակարդակներ

-Ինչպե՞ս են կոչվում ողջ երկրագնդի վրա ջերմաստիճանի բարձրացումը:

-Ի՞նչ կպատահեր, եթե բուսական աշխարհը վերանար:

Որոշ հարցեր պարզապես փաստերի վերհիշում են պահանջում: Այսպիսի

հարցերն անշուշտ որոշակի առումով օգտակար են. ամրապնդում են նախկինում սովորածը, մարզում հիշողությունը, «մատնանշում» թեմայի ամենակարևոր կետերը և տեղեկացնում ուսուցչին, թե աշակերտներն ինչը կարող են մտապահել, ինչը՝ ոչ:

Այնուամենայնիվ, սովորելն ավելին է, քան մտապահելը: Անգամ թոհ ու բոհով անցած ուսուցիչները կընդունեն, որ քննություն նախատեսող ծրագրերի մեծ մասում փաստերի վերհիշման համար տրվում է գնահատականների կեսից քիչը: Գնահատականների մեծ մասը տրվում է բարձր կարգի հմտությունների համար, ինչպես օրինակ՝ ուսումնասիրվող առարկայի հետ կապված հասկացություններն ու սկզբունքներն ըմբռնելու և կիրառելու ունակությունը: Չնայած պաշտոնապես ընդունված չէ, բայց իրականում գնահատականները տրվում են ավելի ընդհանրական «մտածողության հմտությունների» համար, ինչպես օրինակ՝ հիշողությունը զտելու և միայն տվյալ հարցին համապատասխանող տեղեկատվությունն ընտրելու կարողությունը:

«Փաստային» հարցերն առանձին վերցրած չեն զարգացնում հասկացողությունը և թույլ չեն տալիս, որ աշակերտները կիրառեն իրենց գիտելիքը՝ բարձր մտածողության հմտությունները դեռ մի կողմ թողած: Կան բազմաթիվ այլ տեսակի հարցեր, որոնք ավելին են պահանջում:

Տրևոր Քերին (1982) առանձնացնում է մի շարք այլ հարցերի տեսակներ: Ստորև ներկայացվում է նրա առաջարկած դասակարգումը.

| Հարցի տեսակը | Օրինակ |
|---|---|
| **Փաստային** | Ո՞րն է Ֆրանսիայի մայրաքաղաքը: |
| **Անվանող** | Ի՞նչ է կոչվում շան ձագը: |
| **Դիտարկող** | Ի՞նչ գույնի են ծառերի տերևները աշնանը: |
| **Վերահսկող** | Կկսրդա՞ս, Սամվե՛լ: |
| **Կեղծ հարց** | (Բաց հարց է, սակայն ուսուցիչը միայն մեկ պատասխան է ակնկալում)<br>Ի՞նչ եք տեսնում այստեղ: |

| **Բարձր կարգի հարցերի տեսակներ** | |
|---|---|
| **Ստեղծագործական/Հայեցողական վարկած** | Ի՞նչ կպատահի, եթե վաղը մոլորակի բոլո ր ծառերը կտրվեն: |
| **Պարզաբանող** | Ինչո՞ւ են «Երրորդ աշխարհի» երկրների ժողովուրդներն այդքան շատ երեխաներ ունենում: |
| **Գնահատման** | Ինչ վտանգ է ներկայացնում անտառահատումը: |
| **Խնդիրներ լուծող/ գործնական** | Ինչ պետք է անենք, որպեսզի խմելու ջուրը անտեղի չվատնենք: |

Փաստերն արագ մոռացվում են, մինչդեռ բարձր մտածողության հմտությունները մտապահվելու միտում ունեն, քանի որ այսպիսի հմտություններն ավելի լայն կիրառություն ունեն և ըստ այդմ էլ ավելի հաճախ են օգտագործվում: Որոշ երկրների, քաղաքների բնակչության քանակը օրինակ, ժամանակ առ ժամանակ չվերհիշելու դեպքում արագ կմոռացվեն: Մեր մշակույթի պես մշակույթում հազիվ թե հնարավոր լինի գերագնահատել բարձր մտավոր հմտությունների կարևորությունը. զարգացնելու դեպքում այսպիսի հմտությունները կարող են կիրառվել մարդկային բոլոր ձեռնարկումներում: Այս հմտությունները դպրոցական կամ քոլեջի տարիների հիմնական ձեռքբերումներն են այն մարդկանց մեծամասնության համար, ովքեր կրթության ընթացքում ստացած փաստացի գիտելիքի ուղիղ կիրառության քիչ առիթներ են ունեցել: Մտածողության այս թանկարժեք հմտությունները կարելի է միայն զարգացնել հարցադրումների արդյունավետ կիրառման դեպքում: Հարցադրումների կիրառումն ապահովում է նաև բովանդակության ըմբռնումը:

Սկսնակ բազմաթիվ ուսուցիչների համար շատ դժվար է պահպանել հարցերի երկար շղթան, քանի որ վերջինս պահանջում է «ոտքի վրա մտածելու» կարողություն՝ անսպասելի պատասխանն ընդունելու և այն

հերթական արդյունավետ հարցին վերածելու համար:

Տրամաբանական կլինի նախօրոք մշակել դասի ընթացքում տրվելիք և հատկապես մտածել ստիպող հարցերը: Ինչևէ, շատ չանցած ուսուցիչը կկարողանա կազմել հարցերը «տեղում»:

Ըստ Տրևոր Քերիի (1982)՝ հարցադրումների կիրառման ընթացքում անփորձ ուսուցիչների հիմնական թերությունները սրանք են. նրանց բառապաշարը չափազանց խճճված է. նրանք աշակերտներին մտածելու բավականաչափ ժամանակ չեն տալիս. բավականաչափ չեն գոտեպնդում (օրինակ՝ գովեստի արժանացնում) և հաճախ չեն կարողանում աշակերտին մղել դեպի ճիշտ պատասխանը, օրինակ՝ ավելի պարզ հարց տալով: Բազմաթիվ վերապատրաստվող ուսուցիչներ տեղյակ չեն այս թերություններից, այդ պատճառով սկզբի համար կարելի է անել ավելին, քան պետք է. հարցերը դարձնել շատ հասկանալի և հակիրճ, տալ ավելի շատ մտածելու ժամանակ, քան կարծում եք՝ անհրաժեշտ է և ասել ավելի շատ գովասանքի խոսքեր, քան կարծում ենք՝ անհրաժեշտ է:

Ըստ Ֆ. Գրոյսերի (1964)՝ հարցերը պետք է լինեն հասկանալի, բովանդակալից, հակիրճ, բնական ու պարզ լեզվով շարադրված, մտածելու տեղիք տվող և ներգրավող,

«փաստային» և «մտածել ստիպող» հարցերի միջև հավասարակշռություն պետք է լինի:

## Տվյալների մշակում և վերլուծություն

Ելնելով 10-րդ դասարանում անցկացրած դասերի արդյունքներից՝ աշակերտների ակտիվությունց, նյութի յուրացման մակարդակից կարելի է հատատել, որ հարցադրումների մեթոդն ունի գերագույն կարևորություն: Առանց դրա հնարավոր չէ զարգացնել յուրահատուկ հասկացողություն կամ այլ բարձր մտավոր հմտություններ: Այն ստիպում է աշակերտներին ինքնուրույն մտածել և ստեղծում է բարձրորակ, փոխանցելի գիտելիք:

Այն թույլ է տալիս աշակերտներին կիրառել իրենց ուսուցանվող հասկացություններն ու սկզբունքները, իսկ ուսուցիչներին հնարավորություն է տալիս այս կիրառությունը ստուգել և շտկել: Հարցադրումների շնորհիվ ուսուցիչները ստանում են նաև հետադարձ կապ ուսումնառության գործընթացի վերաբերյալ և «չեն կորցնում» աշակերտներին:

Աշակերտների համար հարցադրումներով զրույցը հետաքրքիր և հաճելի գործընթաց է, հատկապես 10-րդ դասարանի աշակերտների համար, քանի որ նրանք դեռևս կաշկանդվում են նոր խմբում, նոր ուսուցչի մոտ,

մինչդեռ՝ ճիշտ պատասխանները նրանց վստահության և հաջողության զգացողություն են պարգևում: Նույնիսկ այն աշակերտները, որոնք անձամբ չեն պատասխանում, բայց ինքնուրույն գտնում են ճիշտ պատասխանը, վստահություն են ձեռք բերում: Այս վստահությունն ու հաջողությունը՝ գովասանքի և հավանության ուղեկցությամբ, մոտիվացիայի առաջ մղման պատճառ են հանդիսանում:

Այնուամենայնիվ, շատերիս համար հարցադրումների մեթոդն անծանոթ է, չնայած մի փոքր փորձառնությունից հետո բնականոն երևույթ է դառնում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Հանրակրթության պետական չափորոշիչ (նախագիծ, 2020):
2. Հանրակրթության պետական կրթակարգ, ՀՀ կառավարության նիստի հ. 33 արձանագրային որոշում, 26.08.2004թ.:
3. Հանրակրթական հիմնական դպրոցի «Օտար լեզու>> առարկայի չափորոշիչներ և ծրագրեր (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. հունվարի 20-ի N 40-Ա/Ք հրաման):
4. Հանրակրթական ավագ դպրոցի «Օտար լեզու» առարկայի ընդհանուր և խորացված ուսուցման դասընթացների չափորոշիչներ և ծրագրեր (ՀՀ կրթության և գիտության նախարարի 04.05.2009 թ. N 381-Ա/Ք հրաման):
5. **https://www.atet.su/IMUZ/tipy_urokov.htm**
6. «Ուսուցման արդյունավետ հնարներ »/ Ս. Խաչատրյան, «Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ» 2020թ

7. «Կամուրջներ պատերի փոխարեն »/ Ս. Խաչատրյան, «Անտարես»2014թ

8. «Современное обучение », Джефф Петти, Москва 2010г

9. Petty,G.(2009) Teaching today CH14 “Questioning”

ՀԱՎԵԼՎԱԾ 1

**Հարցադրումների հմտությունների ստուգացանկ՝ «տասը պատվիրանները»**

1,Տալի՞ս եք այնպիսի հարցեր, որոնց պատասխաններն աշակերտները հաջողությամբ են գտնում:
2,Տալի՞ս եք աշակերտներին մտածելու ժամանակ, օրինակ՝ զույգերով աշխատանքի կիրառմամբ:
3,Օգտագործո՞ւմ եք «Մարմնի լեզուն» (աչքերի կոնտակտ, ժպիտ, հոնքերի բարձրացում, գլխով հաստատում և այլն) պատասխանները խրախուսելու համար:
4,Միշտ շնորհակալություն հայտնո՞ւմ եք, գովեստի արժանացնո՞ւմ կամ այլ կերպ երախտապարտ լինո՞ւմ եք պատասխանների համար:
5,Խուսափո՞ւմ եք աշակերտների պատասխանները ծաղրի առարկա

դարձնելուց:

6,Եթե պատասխան չի լինում, կարողանո՞ւմ եք տալ դեպի սկզբանական հարցը տանող ավելի պարզ հարց:

7,Ձևակերպո՞ւմ եք հակիրճ ու հասկանալի հարցեր՝ հասարակ լեզվի օգտագործմամբ:

8,Խուսափո՞ւմ եք բացառապես փաստերի վրա հիմնված հարցերից:

9,Կարողանո՞ւմ եք հավասարապես բաշխել հարցերը կամ այլ կերպ ներգրավել բոլոր աշակերտներին:

10,Կարողանո՞ւմ եք ուսուցչի խոսքի ընթացքում մեկ րոպեում, օրինակ, երկու հարց տալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԵԹՈԴ - Հարցադրումներով Դասավանդում - Առարկա/թեմա——————————————

Թեման սկսե՛ք՝ «պատմելով դասավանդելու» փոխարեն սովորողներին տալով այնպիսի հարցադրում, որի միջոցով կհանգեք դասավանդվող թեմային:

| Գործողություն | Հստակեցնող ուղղորդող կետեր, հստակ ձևակերպումներ, հարցեր, գաղափարներ և այլն | Տևող |
|---|---|---|
| Գործողություն - Հարցադրում | | 5ր |
| Սովորողներին բաժանում եմ զույգերի կամ փոքր խմբերի և խնդրում եմ որպեսզի նրանք առողջ դատողության, փորձառության և նախկին գիտելիքի կիրառմամբ պատասխանեն մեկ հարցի կամ հարցերի շղթայի:<br><br>Այստեղ գրում եմ այն գաղափարները, որոնց հիշատակումը և կամ տրամաբանական դուրս բերումն եմ ակնկալում իմ հարցերի արդյունքում:<br><br>Գ1/ | Հարց<br><br>Այստեղ հստակ գրում եմ հարցը, որոնց պատասխանելով սովորողները կհանգեն թեմային առչնվող գաղափարներին: Հատուկ՝ մտածում եմ թե ինչպես ձևակերպեմ հարցերը, որպեսզի դրանք նաև հետաքրքրություն առաջացնեն ցանկացած աշակերտի մոտ: Ինչպես են այդ հարցերը կապվում աշակերտների համար իսկապես կարևոր հարցերի հետ և ինքս ինձ համար ձևակերպում եմ, թե: Ինչու՞ է կարևոր աշակերտին մտածել այս թեմայի շուրջ<br><br>Բոլոր սովորողներին կամ նրանց խմբերին կարող եմ տալ կամ նույն | |

| | | |
|---|---|---|
| Գ2/<br><br>Գ3/<br><br>Գաղափարները, և դրանք բացահայտող հարցերը գրում եմ որոշակի հերթականությամբ, պահպանելով ստորև նշված տրամաբանական հաջորդականություններից մեկը<br><br>● ընդհանուրից մասնավոր,<br>● առավել պարզից բարդ,<br>● առավել ոգևորողից՝ սակավ հետաքրքիր<br><br>Սահմանում եմ հարցերի քննարկման ժամանակը, կախված հարցի բովանդակությունից մեկ րոպեից մինչև քսան րոպե և նույնսի ավելի երկար | հարցերը, կամ էլ միևնույն թեմայի վերաբերյալ տարբեր հարցեր:<br><br>Հ1/<br><br>Հ2/<br><br>Հ3/ | |
| Խնդրում եմ յուրաքանչյուր զույգի կամ խմբի <u>անհատ սովորողին</u> մյուսներից **անկախ գրի առնել սեփական մտքերը**. | Ինչ մտքեր եմ ակնկալում, տարբերակներ<br><br>S1<br><br>S2<br><br>S3 | 5 |

| | | |
|---|---|---|
| | | |
| Խնդրում եմ սովորողներին **զույգերով կամ եռյակներով քննարկել** իրենց գրառումները, ընդ որում, համոզվում եմ, որ յուրաքանչյուր զույգ կամ խումբ ունի մեկ գրող անձ, ով հավաքում է ողջ խմբի մտքերը, որպեսզի վերջում զեկուցի:<br><br>Հարցնում եմ, թե արդյոք նրանք հավելյալ ժամանակի կարիք ունե՞ն. | Առաջադրանքի հանդեպ սովորողների ուշադրությունը վերահսկելու նպատակով բացատրում եմ Աշխատանքի Որակի Չափանիշները (ԱՈՉ), որոնք ստուգելու եմ գրառումների մեջ: Ասում եմ նաև, որ այս չափանիշներով պետք է ընտրել այն գաղափարը, որն արժե բարձրաձայնել:<br><br>ԱՈՉ1/<br><br>ԱՈՉ 2/ | |
| Վերջացնելուց հետո յուրաքանչյուր զույգին կամ խմբին խնդրում եմ բարձրաձայնել իրենց գաղափարներից մեկը՝ համոզվելով, որ բոլոր խմբերը կարող են առաջարկել որևէ գաղափար:<br><br>Հրավիրում եմ բոլոր սովորողներին ուշադրություն դարձնել իրենց և մյուս խմբերի հնչեցրած գաղափարների միջև նմանություններին ու տարաձայնություններին | Գրատախտակին գրի եմ առնում համոզիչ գաղափարները՝ ցանկության դեպքում յուրաքանչյուր գաղափարի օգտին որևէ մեկնաբանող խոսք ասելով: | |

| | | |
|---|---|---|
| Թո՛ւյլ եմ տալիս, որ դասարանը քննարկի բոլոր տարաձայնությունները մինչև վերջնական համաձայնեցված պատասխան ունենալը: (առավել կիրառելի է, երբ բոլոր խմբերը պատասխանում են միևնույն մեկ կամ մի քանի հարցերի) | Դասարանի ընդհանուր պատասխանին հավելում եմ նրանց կողմից բաց թողնված լրացուցիչ կետերը և շտկում եմ բոլոր թյուրըմբռնումները:<br><br>(Եթե սովորողները տալիս են պատասխանի մի մասը, դա խնայում է իմ խոսքի կեսը՝ առաջացնելով հետաքրքրություն և զարգացնելով մտածողության հմտությունները:) | |
| Կատարում եմ հավելումներ և շտկումներ | Ամբողջ խոսակցությունը հանգում է հետևյալ Գաղափար(ներ)ին (Գ)<br><br>Գ1/<br><br>Գ2/ | |